

ԿԱՐԳ

ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ (ԼՈԳՈՅԻ) ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հաղթանակի 75-ամյակի նվիրված տոնակատարության տարբերանշանի (լոգոյի) ընտրության մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) անցկացման, կազմակերպման կարգը և պայմանները:

2. ՀԱՅՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2. Մրցույթին մասնակցելու հայտերն ընդունվում են էսքիզի տեսքով՝ գունավոր և սև-սպիտակ տարբերակներով:

3. Էսքիզը ներկայացվում է էլեկտրոնային կրիչի (PDF, JPEG ֆորմատ), ինչպես նաև 50x60 սմ ստվարաթղթի վրա:

4. Աշխատանքները ներկայացվում են փակ ծրարներով, որոնց մեջ տեղադրվում է հեղինակի անձնական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, հասցե, հեռախոսահամար) վերաբերյալ թերթիկ:

5. Հեղինակի կողմից թերթիկի վրա պարտադիր գրվում է 5 նիշից բաղկացած թվային կոդ՝ թվերի դասակարգումը գրվում է հեղինակի ցանկությամբ:

6. Հեղինակի կողմից սույն կարգի 5-րդ կետով նախատեսված նույն կոդը պետք է գրվի նաև փակ ծրարի վերևի աջ անկյունում:

7. Մրցույթին ներկայացված հայտերը ենթակա չեն վերադարձման:

3. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

8. Մրցույթի մասնակցության հայտերը հեղինակի (այսուհետ՝ մրցույթի մասնակից) կամ նրա լիազորված անձի կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ժամանակակից արվեստի վարչություն:

9. Նախարարության ժամանակակից արվեստի վարչությունը հայտերը ստանալուց հետո դրանք գրանցում է գրանցամատյանում՝ նշելով հայտերի հանձնման տարին, ամիսը, ամսաթիվը և փակ ծրարի վրա նշված կողը:

10. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության կողմից սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով հայտերը գրանցամատյանում գրանցելուց հետո հայտերը հանձնողներին տրվում է հայտերի ընդունման վերաբերյալ համապատասխան ստացական:

11. Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության ժամանակակից արվեստի վարչությունն ամփոփում է ստացված հայտերը, կազմում համապատասխան տեղեկանք՝ նշելով միայն ներկայացված հայտերի քանակը և փակ ծրարի վրա նշված կողը: Նախարարության ժամանակակից արվեստի վարչությունը մրցույթի անցկացման օրը հայտերը և տեղեկանքը համապատասխան ստացականով հանձնում է մրցութային հանձնաժողովի նախագահին:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ նախնական և եզրափակիչ: Յուրաքանչյուր փուլում գումարվում է առնվազն մեկ նիստ: Նիստը իրավազոր է, եթե դրան ներկա են հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

13. Մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 3-ի N 484-Ա որոշմամբ ստեղծված և հաստատված Հաղթանակի և խաղաղության ու հանրապետության տոներին նվիրված միջոցառումների նախապատրաստման և կազմակերպման՝ մշտական հիմունքներով գործող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:

14. Մրցույթի անցկացման առաջին նիստի օրը, ժամը և վայրը որոշվում է հանձնաժողովի նախագահի կողմից, իսկ հաջորդ նիստ(եր)ի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի կողմից:

15. Առաջին նիստի օրը, ժամը և վայրը որոշելուց հետո 1 օրվա ընթացքում կազմվում է մրցույթի անցկացման օրակարգը և տրամադրում հանձնաժողովի անդամներին:

16. Մրցույթի եզրափակիչ փուլի օրվա, ժամի և վայրի մասին մրցույթի մասնակիցներին տեղեկացվում են մրցույթ անցկացնելու օրվանից առնվազն 1 օր առաջ:

17. Մրցույթի մասնակիցը մրցույթի եզրափակիչ փուլի օրը պետք է ներկա գտնվի մրցույթի անցկացման վայրում, սակայն առանց հանձնաժողովի նախագահի հրավերի իրավունք չունի մտնելու մրցույթի անցկացման սենյակ:

18. Մրցույթին մեծ թվով հայտեր ներկայացվելու և նույն օրը հանձնաժողովի կողմից դրանք ուսումնասիրելու, քննարկելու անհնարինության դեպքում հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ և հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, որոշում է կայացվում մրցույթի գործընթացը մեկ այլ օր շարունակելու վերաբերյալ:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

19. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը հանձնաժողովի անդամների ներկայությամբ առանձին-առանձին բացում է փակ ծրարները՝ հանելով ներկայացված աշխատանքները, բացառությամբ հեղինակի անձնական տվյալների վերաբերյալ թերթիկի: Յուրաքանչյուր աշխատանք դնում է իր ծրարի վրա, որից հետո աշխատանքները ներկայացնում է հանձնաժողովի անդամներին:

20. Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում և քննարկում են ներկայացված աշխատանքները, որից հետո հանձնաժողովի նախագահի կողմից հայտարարվում է բաց քվեարկություն: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

21. Մրցույթի նախնական փուլում հաղթող են ճանաչվում հանձնաժողովի անդամների կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած աշխատանքները:

22. Մրցույթի նախնական փուլի քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո հանձնաժողովի նախագահը ծրարներից հանում է նախնական փուլում հաղթած

աշխատանքների հեղինակների անձնական տվյալների թերթիկը և բարձրաձայն հայտարարում թվային կոդն ու հեղինակի անունը, ազգանունը: Նախնական փուլի արդյունքներն ամփոփելուց հետո հանձնաժողովի քարտուղարի կողմից կազմվում է արձանագրություն՝ դրանում նշելով նախնական փուլը հաղթահարած, ինչպես նաև չհաղթահարած աշխատանքների հեղինակների անունը, ազգանունը և թվային կոդը:

23. Մրցույթի նախնական փուլի ավարտից հետո՝ հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում, անցկացվում է մրցույթի եզրափակիչ փուլ:

24. Սույն կարգի 17-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովի քարտուղարը մրցույթի նախնական փուլը հաղթահարած աշխատանքների հեղինակներին տեղեկացնում է մրցույթի եզրափակիչ փուլի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

6. ՄՐՑՈՒՅԹԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԸ

25. Մրցույթի եզրափակիչ փուլի մեկնարկը տրվելուց հետո հանձնաժողովի նախագահը առանձին-առանձին մրցույթի անցկացման սենյակ է հրավիրում մրցույթի նախնական փուլը հաղթահարած մասնակիցներին:

26. Մրցույթի նախնական փուլը հաղթահարած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր աշխատանքի մանրամասն նկարագրությունը:

27. Մրցույթի մասնակիցներին լսելուց հետո հանձնաժողովի անդամները կարող են հարցեր տալ հեղինակներին և մեկ անգամ ևս քննարկել նախնական փուլը հաղթահարած աշխատանքները:

28. Մրցույթի նախնական փուլը հաղթահարած բոլոր մասնակիցների կողմից իրենց աշխատանքների նկարագրությունը հանձնաժողովին ներկայացնելուց հետո, առանց մասնակիցների ներկայության, հանձնաժողովի անդամները կատարում են բաց քվեարկություն:

29. Մրցույթի եզրափակիչ փուլում հաղթող են ճանաչվում մրցույթին ներկա հանձնաժողովի անդամների առավելագույն ձայներ ստացած աշխատանքը: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

30. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աշխատանքների հեղինակներին կարող է առաջարկել որոշակի ուղղումներ կատարել աշխատանքներում:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

31. Մրցույթի արդյունքներն ամփոփելուց և արձանագրությունը կազմելուց հետո հանձնաժողովի նախագահը սենյակ է հրավիրում մրցույթի մասնակիցներին և բարձրաձայն հայտարարում է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աշխատանքը և դրա հեղինակների անունը և ազգանունը:

32. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աշխատանքի հեղինակին տրվում է դրամական մրցանակ՝ 1.000.000 ՀՀ դրամ, /ներառյալ հարկերը/:

8. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

33. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է ԿԳՄՍ նախարարության կայքէջում:

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

34. Մրցույթին ներկայացված բոլոր աշխատանքների գույքային և հեղինակային իրավունքները պատկանում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը: